ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՄԱՇՏՈՑ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԹԱՋԻՐՅԱՆ

Գերաշնորհ Տ. Մաշտոց եպիսկոպոս Թաջիրյանը, ավազանի անունով Հովհաննես, ծնվել է 1895 թվականի դեկտեմբերին Կեսարիա քաղաքի (Թուրքիա) Կարմիր գյուղում, ծառայողների ընտանիքում։ Նախնական կրթությունը ստացել է ծխական դպրոցում և 1912—1915 թվականներին աշակերտել է Կեսարիայի Ս. Կարապետ վանքի հոգևոր դպրոցին։

1915—1920 թվականներին կրել է ծանր զրկանքներ գաղթականության օրերին և 1920 թվականին հաստատվել է Փարիզում, ուր հետևել է իրավաբանական և պատմագիտական դասընթացների։

Այնուհետև, մինչև 1947 թվականը, Փարիզում և Լիբանանում աշխատել է որպես հաշվապահ և դատապաշտպան։

1947 թվականին ներգաղթել է Մայր Հայրենիք Լիբանանից և մինչև 1955 թվականը աշխատել է իր մասնագիտության գծով մի շարք հիմնարկներում։

1955 թվականի սեպտեմբերին առել է հոգևորական սքեմ և դարձել է Մայր Աթոռի միաբան։

1955 թվականի հոկտեմբերին, Ազգային-եկեղեցական ժողովում, ընտրվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վերատուգիչ հանձնաժողովի անդամ։

Այնուհետև, 1956—1960 թվականներին, եղել է Մայր Աթոռի միաբանական սեղանատան մատակարար։

1959 թվականի հոկտեմբերին ստացել է վարդապետական աստիճան և 1960 թվականին նշանակվել է Շիրակի թեմի առաջնորդ։

1962 թվականի հոկտեմբերի 14-ին եպիսկոպոս է ձեռնադրվել Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ձեռքով։



Գերաշնորհ Տ. Մաշտոց եպիսկոպոս Թաջիրյանը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նվիրված, աշխատասեր և պարտաճանաչ միաբաններից է և յուրովսանն ու խղճի մտոք ծառայում է Մայր Աթոռին և Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցուն։